Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2015 թվականի դեկտեմբերի 14-ի նիստի N 3 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) կազմի ձևավորման նպատակով, պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրված թեկնածուներին խորհրդի անդամներ ընտրելու մասին հարցը:**

Զեկուցող՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Կ.Լ.Աթոյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Պրոֆեսորներ Գ.Ի.Վարդանյանը, Գ.Ե.Կիրակոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **1.** Համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 975 - Ն որոշման և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) կազմի ձևավորման նպատակով, պրոֆեսորադասախոսական կազմից խորհրդի անդամության թեկնածուներ ընտրել հետևյալ անձանց.

1) **Քալանթարյան Պարույր Անդրանիկի**՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսումնա-մեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր (տնտեսագիտության թեկնածու, դոցենտ).

2) **Խաչատրյան Սևակ Սասունի**՝ Հայաստանի պետական տնտեսա-գիտական համալսարանի ուսանողների և շրջանավարտների հետ աշխատանքների գծով պրոռեկտոր (տնտեսագիտության թեկնածու).

3) **Հայրապետյան Արկադի Նիկոլայի**՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ (ֆիզիկամաթեմա-տիկական գիտությունների թեկնածու, դոցենտ).

4) **Թավադյան Միխայիլ Նավասարդի՝** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետի դեկան (տնտեսագիտության թեկնածու, դոցենտ).

5) **Մաթևոսյան Աշոտ Վարազդատի՝** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան (տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր).

6) **Մարգարյան Ատոմ Շավարշի՝** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան (տնտեսագիտության թեկնածու, դոցենտ).

7) **Միքայելյան Վահե Կարմենի՝** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական ֆակուլտետի դեկան (տնտեսագիտության թեկնածու, դոցենտ).

8) **Մովսիսյան Մանուկ Էդվարդի՝** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկան (տնտեսագիտության թեկնածու, դոցենտ):

2. Պրոֆեսորադասախոսական կազմից «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անդամության թեկնածուներ ընտրված անձանց ցանկը ներկայացնել լիազոր մարմին:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն (կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)**:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար **Ն. Հ. Դարբինյան**

14.12.2015 թ.